

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՆ ՄՆԱՅՈՒՆ ԿԵՐՊՈՎ
ԿԸ ՓՈԽԱԴՐՈՒԻ ՍԱՆԹԱ ԳԼԱՐԻԹԱ

Այսու կը հաղորդենք Թեմիս Հոգեւոր Հովիւներուն, Ծխական Խորհուրդներուն, Տիկնանց Միութեան Մասնաճիւղերուն, Թեմական Պարգամաւորներուն, յարակից կազմակերպութիւններուն եւ մեր համայն հաւաքացեալ ժողովուրդին, թէ Իսթ Լոս Անճելըսի Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցին վաճառուելէ ետք, ժամանակաւոր կերպով փոխադրուած էր Նորթ Հալիվուպ եւ ամէն Կիրակի կէսօրէ յետոյ ժամը 1:00ին Սուրբ Պարարագ կը մատուցուէր Էմմանուէլ Լուսերական Եկեղեցւոյ մէջ:

Ինչպէս տեղեակ էք Առաջնորդարանի կողմէ ղրկուած հաղորդագրութիւններէն, Սանթա Գլարիթայի Ծուխը Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրպէրեանի, Սանթա Գլարիթայի Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Հայրապետեանի եւ Ծխական Խորհուրդի հետեւողական աշխատանքներուն շնորհիւ, օժտուեցաւ եկեղեցւոյ կալուածով մը, որուն հասցէն է. 24626 KANSAS STREET, NEWHALL, CA 91321: Բարեփոխումներ կատարուելէ ետք, Կիրակի, Յունիս 28ին, 2009 առաջին Սուրբ Պարարագը մատուցուեցաւ Ծուխի Հոգեւոր Հովիւին կողմէ: Իսկ եկեղեցւոյ նուիրագործան արարողութիւնը կատարուեցաւ Կիրակի, Օգոստոս 9ին, Առաջնորդ Սրբապան Հօր եւ Գերշ. Տ. Վաչէ Արք. Յովսէփեանի կողմէ՝ մասնակցութեամբ հոգեւորականներու:

Նկատի ունենալով, որ Նորթ Հալիվուպի մէջ փոխադրուած Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ կացութիւնը ժամանակաւոր էր, Առաջնորդ Սրբապան Հօր եւ Թեմական Խորհուրդի որոշումով, Կիրակի, Նոյեմբեր 1ին վերջին Սուրբ Պարարագը մատուցուեցաւ Ծուխի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Նարեկ Աւագ Քհնյ. Մատարեանի կողմէ:

Ուրախ ենք յայտարարելու, թէ Կիրակի, Դեկտեմբեր 20ին Սանթա Գլարիթայի Հայց. Եկեղեցւոյ Օծումը պիտի կատարէ Առաջնորդ Սրբապան Հայրը եւ Եկեղեցին պիտի կոչուի ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ: Տէր Նարեկ Սրբապան Հօր կողմէ նշանակուած է Վերակացու Հոգեւոր Հովիւը Նորած Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցւոյ եւ Փալմարէյի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ:

Վստահ ենք Սուրբ Սարգիս Հայց. Եկեղեցին հաստատակամութեամբ եւ նոր թափով պիտի շարունակէ իր հոգեւոր առաքելութիւնը՝ օգտակար հանդիսանալով շրջակայքի հայ համայնքին: